

**Տ. ԱՐՃԵՆ ԱԲԵՂԱ ՍԱՆՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷՇՄԻԱԾԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(14 նոյեմբերի 2004 թ.)

*«Որ փոքրիկն է յամենեսին ի ձեզ՝ ևս
լողից մեծ»:*

(Դուկ. Ձ 48)

«Յանուն Հօր և Որդույ և Ռուսյն Սրբոյ. ամէն».

Միրելի հավաքացյալ քոյքեր և եղբայրներ, ահա այս է մեր Տեր Շխոտ Քրիստոսի այսօրվա ավելարանական թերապությունները մեզ. Ով որ ձեր բոլորի մեջ փոքրագույնն է, նա է մեծը: Շխոտ Իր քարոզությունների ժամանակ հաճախ էր առաջալներին ասում, որ Ինքը հեռանալու է նրանցից: Գալու է մնե օր, երբ թողնելու է աշխարհը, բաժանվելու է Իր առաջալներից, և կանխասացություններ էր անում Իր մահվան և Իր հարության մասին: Առաջալները հաճախ չէին հասկանում Շխոտի ասածները և հոգևորապես չընկալելով՝ մփածում էին, որ եթե Շխոտ բաժանվի իրենցից, հեռանա իրենցից, արդյոք ո՞վ պետք է Նրա գործը շարունակի, ո՞վ պետք է այն քարոզությունները, այն ուսուցումները, որ Շխոտ սկսել էր և Իր առաջալների հետ իրականացնում էր, ո՞վ պետք է փոխարինի ասլվածային այդ գործում, ավելարանական այդ գործում Շխոտին, և հաճախ վեճեր էին ունենում միմյանց հետ, ինչպես Ավելարանն է ասում պարզաբանելու, թե ով է լինելու այն առաջնորդը և Շխոտին փոխարինողը:

Վիճելու դեմքի էր փալիս հարկապես Շխոտի՝ Պետրոս առաքյալին ասված այն խոսքը, թե դու վեմ ես և այդ վեմի վրա պետք է կատուցեմ Իմ Եկեղեցին: Ահա նման մրահոգություններով էին փարված առաջալները, և Շխոտ իմացավ, հասկացավ նրանց մորի խորհուրդը և մի պարագախան դպրեց նրանց, հսկակ մի պարագախան, որը և դարձավ քրիստոնեական բարոյականության հիմնայուններից մեկը. ձեր միջից ամենամեծը թող լինի ամենափոքը և առաջնորդը սպասավորի պես:

Միրելի քոյքեր և եղբայրներ, իիրավի մեծության, առաջնորդության, զլիսավորության ամենաուժեղ օրինակը և ամենամեծ զաղափարը, որ Շխոտ պարզաբանեց Իր առաջալներին, Իր առաջալների միջոցով՝ իրեն հավաքացողներին: Ձեր միջից առաջինը թող նա լինի, ով պարբռասդրակամ է ծառայելու մյուսներին, ով հանձն է առնում մյուսների սպասավորությունը, ով հանձն է առնում մյուսների խնամքը և նրանց է խնամում, ովքեր իրեն ենթակա են: Եվ այսպիսինը արժանի կլինի երկնքի արքայությունում առաջինը կոչվելու, այսպիսինը արժանի կլինի երկնքի արքայության մեջ երանության վիճակի մեջ լինելու, եթե իր կյանքում ծառայությամբ, ծառայափրությամբ, սպասավորությամբ իր կյանքն է ապրել, իր կյանքն է բերել որպես մարդ, որպես անհայտ:

Դիսուս Զրիսպոս պարզ մի քարոզիչ էր, որ միայն խոսքեր էր ասում, որ միայն գաղափարներ էր տպածություն: Դիսուս Զրիսպոս այդ խոսքերը, այդ գաղափարները տպառող էր և ապրեցնող էր և նախ Խնօք Իր կյանքով եկավ մեզ փաստելու, եկավ մեզ ցոյց տպառության գաղափարը, եկավ մեզ ցոյց տպառություն, թե ինչպես կարենի է ծառայելով ծառայության լինել առաջնորդ, ծառայելով, սպասավորելով իր սպասավորին՝ լինել գիշավոր. լինել մեծ: Խնօք, լինելով Աստվածորդի, լինելով Ուսուցիչ, լինելով Վարդապետ, եկավ ծոնկի և Իր առաջալների ուժքերը լկաց: Սա խոնարհության, սպասավորության գերազույն օրինակն է, որ դվից մեզ Դիսուս և մեզ էլ փոխանցեց հենց նույն սպասավորության, հենց նույն ծառայության գաղափարը:

Հաճախ մեր կյանքում պարագում է, երբ որևէ մեկս փոքր կամ մեծ պաշտոն ենք սրբանձնում, հանկարծ աշխարհն ասես սկսում է մեր շուրջը պարփակել, և երբեմն սկսում ենք մրածել, որ մարդիկ, մեր ենթականները կոչված են միայն մեզ ծառայելու, իսկ մենք կոչում ունենք նրանց երամայելու, նրանց պարփակընը, պահանջելու, սակայն ավելարաբանական այս օրինակը ևս մեկ անգամ հիշեցնում է մեզ՝ իշխանավորը, թագավորը պարփակոր է խրնամք դանել նախ և առաջ իր ենթակայի նկարմամբ, պարփակոր է հոգածություն դանել, հոգածություն ցուցաբերել իր սպասավորի նկարմամբ: Դիսուս հարցնում է. «Ո՞վ է արդյոք մեծ, սեղանապետը, թե՞ սպասավորը». անշուշտ սեղանապետը, որովհետև նսպում է սեղանի գլխին, իսկ սպասավորը նրան սպասարկում է: Սակայն սեղանապետը ավելի է մեծանում, ավելի է վեհանում, եթե զիրդի հարկը իր սպասավորի, և եթե զիրդի սիրել, խնամել իր սպասավորին: Եվ սա առավել ևս պարփակորեցնող է սպասավորի համար, որ ինքն էլ առավել սիրով, առավել նվիրվածությամբ, առավել ուժով, նվիրումով ծառայությունը բերի իր փերոջ, ծառայությունը բերի իր իշխանավորին:

Չեա, սիրելի հավաքացյալներ, այսօրվա ավելարաբանական օրինակը մի գեղեցիկ դասավանդում է մեզ բոլորի համար, որ մենք էլ մեր կյանքում, մեր շրջապատում, մեր ընդունիքներից ներս, մեր աշխարհանքի վայրերում իմանանք ճշմարիդ առաջնորդության, ճշմարիդ մեծության գաղափարը: Ճշմարիդ մեծությունը, նորից կրկնեմ, իր սպասավորին սպասավորել զիրնալու մեջ է և ոչ թե այդ մեծությունը, այդ պաշտոնը, այդ դիրքը օգտագործել իր նպատակների համար, իր անձնական հաճույքների համար կամ մարդկանց հրամաններ արձակելու համար: Ներկարար, մենք պետք է խոնարհարար, սիրով, հարգանքով լցված այս գաղափարներով, լցված Դիսուս Զրիսպոսի ուսուցմամբ, սիրենք, հարգենք և միմյանց նկարմամբ ծառայություն բերելով, միմյանց ինամք դանելով՝ կարողանանք երկնքի արքայության դրսները բացել մեր առջև:

Այս այս է այսօրվա խորհուրդը, որ փորձեցինք փոխանցել ձեզ, սիրելի հավաքացյալներ, և մաղթում եմ, որ Տերը զորացնի ամենքիս, ուժ տա, որ իրավես կարողանանք այդ՝ առաջին հայացքից ծանր, դժվար թվացող արարքը, ծառայությունը բերենք մենք մյուսիս, բերենք մեր ժողովրդին, բերենք մեր ընդառնիքներին, բերենք մեր հայրենիքին, մեր Եկեղեցուն և ի վերջո մեր Տիրոջ՝ մեր Արարջին, լինենք Նրա հավաքարիմ սաները, լինենք Նրա հավաքարիմ աշակերտները և կարողանանք իրավես Տիրոջ արքայության ճանապարհներով քայլել: Թող Տերը զորացնի ամենքիս այժմ և հավիրյանս. ամեն: